

**ՀԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Քրիստինե Յուրիի Բաղդասարյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ գիտական քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Արփիինե Մեխակի Կյուրեղյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ հայցորդ,
կրտսեր գիտաշխատող

Ցանկացած երկրում բնակչության վճարունակությունը կանխորոշում է հարկային բեռի մակարդակը, իսկ որքան այն բարձր է, ուստի ցածր է հարկային բեռը: Հարց է առաջանում պետության սոցիալական խնդիրները լուծելու համար առավել ընդունելի է հարկային բեռի բարձր մակարդակը, թե հակառակը՝ հարկայի բեռի ցածր մակարդակը:

Այդ հարցին կարելի է պատասխանել երկու առումներով.

1. Որքան բարձր է բնակչության մեկ շնչի հաշվով հարկի միջին գումարը, այնքան բարձր է հարկային բեռը:

2. Հարկային բարձր բեռը նպաստում է, որ հարկատուն խուսափի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել կամ նախընտրի ավելի շատ աշխատել տնային տնտեսությունում: Ընդ որում, առաջանում է լրացուցիչ հարկային բեռ, քանի որ հարկատուի պոտենցիալ եկամուտները, կարծես, «կորչում են՝ ստվերի տեսքով»՝ առաջացնելով պետական բյուջե փոխանցվող եկամուտների նվազեցում:

Հողվածում վերլուծվել է համախառն ներքին արդյունքի վրա ազդում է ոչ միայն բազիսային տարվա հարկային բեռը, այլև ընթացիկ տարվա հարկային բեռը, հետևաբար վերջիններիս միջև փոխկապակցվածությունը բացահայտելու նպատակով մշակվել և առաջարկվել է ռեգրեսիոն հետևյալ բանաձևը՝

$$GDP = c_0 + c_1 * TB_{t-1} + c_2 * TB_t + \varepsilon_t \quad (1)$$

որտեղ՝

GDP-ն՝ անվանական ՀՆԱ-ն է, շուկայական գներով (մլն. դրամ),

TB_{t-1} - ն՝ բազիսային տարվա հարկային բեռն է (որը հաշվարկվել է հարկեր/ ՀՆԱ հարաբերակցությամբ)


TB_t - ն՝ ընթացիկ տարվա հարկային բեռն է (որը հաշվարկվել է հարկեր/ ՀՆԱ հարաբերակցությամբ)

c_0 , c_1 c_2 -ը՝ հաստատուն մեծության և անկախ փոփոխականների էլաստիկության գործակիցներն են

ε_t - ն՝ պատահական սխալի մեծությունն է:



Հաշվարկելու համար դիտարկվել են 2000-2017թթ. ՀՆԱ-ի, բազիսային և ընթացիկ հարկային բեռի եռամսյակային պաշտոնական վիճակագրական տվյալները: (1) տնտեսաչափական մոդելում վիճակագրական շարքերը 72-ն են, իսկ դա նշանակում է, որ ստացված արժեքները գրեթե մոտ են իրականությանը: Այն գնահատվել է փոքրագույն քառակուսիների եղանակով՝ Eviews 9 համակարգչային ծրագրի միջոցով և իրականացվել են համապատասխան ռեգրեսիոն և կոռելյացիոն վերլուծություններ: Պետք է նկատել, որ մինչ մոդելի գնահատելը, անհրաժեշտ է տվյալները համահարթեցնել, ուստի, կեղծ բազմագործոն գծային ռեգրեսիա ստանալուց խուսափելու նպատակով տվյալները լոգարիթմվել են (գծապատկեր 1):

Ռեգրեսիոն մոդելի գնահատման արդյունքում ստացված արդյունքները արտացոլված են աղյուսակ 1-ում, որտեղ c_0 , c_1 c_2 անկախ փոփոխականների գործակիցներն են, և որոնց վիճակագրական հատկություններն են՝ t -վիճականի և Prob. ¹: Իսկ մոդելի որակական հատկանիշները ըմբռնելու համար տրվել են դրանց R^2 -ի, ճշգրտված R^2 -ի արժեքները²:



¹ **Елисева И.И.** Эконометрика: учеб./под ред. И. И. Елисеевой, М., 2009, сс. 25-28.

² **Магнус Я.Р., Катъшев П.К., Пересецкий А.А.** Эконометрика. Начальный курс, М.: Дело, 2004, с. 67.



Գծապատկեր 1. 2000-2017թթ (եռամսյակային տվյալներ) ՀՆԱ-ի, բազիսային և ընթացիկ հարկային բեռի դինամիկան ՀՀ-ում (մլն դրամ)¹

Իրականացված ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ևս հաստատում են, որ ՀՆԱ-ի և հարկային բեռի միջև գոյություն ունի նշանակալի փոխկապվածություն, քանի որ դետերմինացիայի գործակիցը (R^2) հավասար է 0.82, այսինքն կախյալ փոփոխականի փոփոխության շուրջ 82%-ը բացատրվում է ռեգրեսիայով, իսկ մնացած 18%-ը՝ պատահական սխալներով, իսկ դետերմինացիայի ճշգրտված գործակիցը (ճշգրտված R^2) հավասար է 0.80, այսինքն 80%, ինչը ցույց է տալիս, թե դետերմինացիայի ճշգրտման գործակիցը ինչպիսի ազդեցություն է ունեցել դետերմինացիայի գործակցի վրա, և քանի որ գնահատված մոդելում դետերմինացիայի ճշգրտված գործակիցը մոտ է դետերմինացիայի գործակցին, ուստի դա նշանակում է, որ ունենք «որակյալ» ռեգրեսիոն վերլուծություն:

¹ Կազմվել է Eviews- էկոնոմետրիկ մեթոդի ուղեցույցի միջոցով:

Աղյուսակ 1. Մոդելի գնահատման արդյունքները¹

Գործակից	t-վիճականի	Prob.	R ²	Ճշգրտված R ²
13.09550	55.63013	0.0000	0.824004	0.80 8239
-0.179122	-3.089083	0.0029		
0.115658	0.758534	0.0508		

Արդյունքում գնահատված գծային ռեգրեսիայի հավասարման արժեքները արտացոլվել են՝

$$GDP = 13.09550 - 0.179122TB_{t-1} + 0.115658TB_t + \varepsilon_t \quad (2)$$

Ըստ այդմ, (2) տնտեսաչափական մոդելների և մաթեմատիկական գործիքակազմի կիրառության արդյունքում կարելի է եզրակացնել, որ բազիսային տարվա հարկային բեռի մեկ տոկոսային կետի փոփոխությունը նվազեցնում է համախառն ներքին արդյունքը 0.17 կետով, սակայն ընթացիկ տարվա հարկային բեռի մեկ տոկոսային կետի փոփոխությունը բերում է համախառն ներքին արդյունքի 0.11 տոկոսային կետի ավելացման:

Այսպիսով՝ հարկային բեռի օպտիմալ բաշխումն մի կողմից կարող են լուծել ստվերային տնտեսության նվազեցման խնդիրները, մյուս կողմից ապահովել հավասարակշռված հարկային մուտքեր պետական բյուջե՝ միաժամանակ միջոցներ ունենալով իրականացնել նպատակային սոցիալական քաղաքականություն:

ՀԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Քրիստինե Յուրիի Բաղդասարյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ գիտական քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Արփինե Մեխակի Կյուրեղյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ հայցորդ,
կրտսեր գիտաշխատող

Համառոտագիր

Հոդվածում նպատակ է դրվել գնահատել ոչ միայն ընթացիկ հարկային բեռի ազդեցությունը ՀՆԱ-ի վրա, այլ նաև՝ բազիսային տարվա հարկային բեռի ազդեցության չափը: Ըստ այդմ, հոդվածում ներկայացվել են այն հարցերը, որոնք վերաբերում են հարկման մեխանիզմների հարկային բեռի գնահատմանը, ինչը կարող է ունենալ օբյեկտիվ և սուբյեկտիվ արժեքներ: Այսինքն, հարկային բեռը

¹ Հաշվարկվել է հեղինակի կողմից:

տնտեսության և գործարարության տեսանկյուններից կարող է լինել այսպես ասած «ոչ տանելի», իսկ հարկային մարմինների կամ հարկային վարչարարների համար՝ «տանելի»:

Հիմնարաներ. ընթացիկ տարվա հարկային բեռ, հարկային վարչարարություն, բազիսային տարվա հարկային բեռ, անվանական ՀՆԱ, կոռեկցիոն վերլուծություն, ռեգրեսիոն վերլուծություն:

ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ И ОЦЕНКА НАЛОГОВЫХ МЕХАНИЗМОВ

Кристине Юрьевна Багдасарян

Научный секретарь Института экономики им. М.Котаняна НАН РА,
кандидат экономических наук, доцент

Арпине Мехаковна Кюрегян

Младший научный сотрудник Института экономики
им. М.Котаняна НАН РА

Аннотация

Цель статьи - оценить не только влияние текущего налогового бремени на ВВП, но и влияние налогового бремени на базовый год. Соответственно, в статье рассматриваются вопросы, связанные с налоговой оценкой механизмов налогообложения, которые могут иметь объективные и субъективные значения. Другими словами, налоговая нагрузка с точки зрения экономики и бизнеса может быть настолько «недоступной», а для налоговых органов или налоговых администраторов «терпимой».

Ключевые слова. текущее налоговое бремя, налоговое администрирование, базовое налоговое бремя, номинальный ВВП, корреляционный анализ, регрессионный анализ.

TAX MANAGEMENT AND EVALUATION PROBLEMS

Kristine Yuri Baghdasaryan

Scientific Secretary of M. Kotanyan Institute of Economics of NAS RA,
Candidate of Science, associate professor

Arpine Mekhak Kyureghyan

Junior Researcher of M. Kotanyan Institute of Economics of NAS RA

Abstract

The article aimed to assess not only the impact of the current tax burden on GDP, but

also the impact of the tax burden on the base year. Accordingly, the article addresses issues related to tax assessment of taxation mechanisms, which can have objective and subjective values. In other words, the tax burden from the point of view of economy and business can be so "inaccessible", and for tax authorities or tax administrators "tolerable".

Keywords: current tax burden, tax administration, base tax burden, nominal GDP, correlation analysis, regression analysis.